ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 337-Ա

08 հուլիսի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի 4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2024 թվականի հունիս ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի աշխատողներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործառույթները:

08.07.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ 08428824 «ԼՇԵՎԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 14»

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ